ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12. 1963 Общественные науки

Ա. Բ. Կարինյան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ*

Ելույթ ունեցող բոլոր զեկուցողները մեծ ուշադրություն նվիրեցին Անդրկովկասի ժողովուրդների համագործակցության կարևոր հարցերի լուսաբանմանը։ Բավական փաստեր բերեցին անցած պատմությունից։ Ուրվագծվեց կուլտուրական շինարարության պատկերը։ Անտարակույս, առանձին զեկուցումներում ուշադրավ էին սովետական իշխանության համար ժողովուրդների մղած համատեղ պայքարի, հեղափոխական համագործակցության պատմության նշանակալի էջերի, սովետական ժողովուրդների զարգացման ու մերձեցման լենինյան կուրսի մասին նյութերը։

Հետաքրքրական է նաև այն, որ առանձին ելույթներում ուրվագծվեց Անդրկովկասի նախաոևոլյուցիոն տարիների հասարակական-քաղաքական դրության բնութագիրը։ Արտասահմանյան ռեակցիոն պատմագրության ներկայացուցիչները ըստ էության շատ չեն սիրում խոսել մոայլ անցյալի մասին։ Նրանք հաճախ սահմանափակվում են դատարկ դեկլարացիաներով, որ իբր իրենց մոտ մշակվել են «լավ պլաններ», և որ այդ պլանները քայքայել են բոլշևիկները...

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նախօրյակին բուրժուական և քաղաքական պարտիաները դեռևս իշխում էին մեզ մոտ՝ Անդրկովկասում։

Հյուսիսում սովետական իշխանության համար պայքարը սկսվեց ծավալվել 1917 թ. սկզբներին։ 1917 թ. հոկտեմբերին ռուսական պրոլետարիատի հերոսական ապստամբությունները՝ Վ. Ի. Լենինի դրոշի ներքո, ուժգին և վճռական հարված հասցրեցին հին կարգերին և նոր էջեր բացեցին համաշխարհային սոցիալիստական շարժման պատմության մեջ՝ կազմակերպելով աշխարհում Սովետական առաջին մեծ սոցիալիստական ռեսպուբլիկա։ Լենինի պարտիայի սկսած պատմական պայքարը ուժ հաղորդեց ոչ միայն կենտրոնական Ռուսաստանի, այլ նույնիսկ ավելի հեռավոր շրջանների հեղափոխական ակտիվ ելույթներին. ժողովրդական մասսաների հերոսական շարժումները էլ ավելի համախմբեցին սովետական մեծ ժողովրդի լավագույն ուժերը բոլշևիկ-լենինյանների պարտիայի շուրջը։

Այդ դժվարին տարիներին, հզոր հեղափոխական շարժումներին ակտիվորեն արձագանքեցին ռուսական կուլտուրայի ականավոր ներկայացուցիչներ Տի-

---

* *Ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանի ելույթից, կարդացած ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական սեսիայում՝ մասնակցությամբ Ադրբեջանական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների և ՍՄԿՊ կենտկոմին առընթեր Մարքս-Էնգելսի անդրկովկասյան ֆիլիալների, նվիրված Անդրկովկասի ժողովուրդների լենինյան բարեկամությանը։ Գիտական սեսիայի մասին ինֆորմացիան տպագրվում է «Տեղեկագրի» այս համարում։*

միրյազևը, Գուբկինը, Վինտերը, Կլասսենը, Իոֆֆեն, Ֆերսմանը և գիտության ու հասարակության շատ ներկայացուցիչներ։ 1918—1920 թթ. մեծագույն էպոպեան արտացոլված է ռուսական գրական գործերում, Ա. Մ. Գորկու, Վսեվ. Իվանովի, Ֆ. Գլագկովի, Ն. Օստրովսկու և Ա. Ֆադեևի, Ա. Տոլստոյի և Մ. Շոլոխովի հիանալի աշխատություններում։ Արևմուտքի առաջավոր գործիչները այն հեռավոր օրերին նույնպես հատուկ վերաբերմունք դրսևորեցին իրենց շատ նշանավոր ելույթներում։ Ես նկատի ունեմ Անատոլ Ֆրանսի, Բերնարդ Շոուի, Հերբերտ Ուելսի, Հանրի Բարբյուսի, Ռոմեն Ռոլանի, Ջոն Ռիդի, Վիլյամսի ասույթները։

Մեզ մոտ, Անդրկովկասում, սակայն, 1917—1920 թթ. քաղաքական իշխանությունը տակավին գտնվում էր տիրապետող դասակարգերի և բուրժուանացիոնալիստական պարտիաների ձեռքին։

Բաքվի պրոլետարիատի հաղթանակը և 1918 թ. կազմակերպված Անդրկովկասյան առաջին սովետական կառավարությունը՝ Բաքվի կոմունան ավելի ցայտուն ընդգծեցին իմպերիալիստական ինտերվենտների՝ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և կազմակերպությունների հետ Անդրկովկասի բախտը կապելու էությունն ու բնույթը։

Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակը տեղի ունեցավ ուշ՝ 1921 թ. սկզբներին։ Ժողովրդական մասսաների ռևոլյուցիոն շարժումները մեզ մոտ ընթացել են արտակարգ բարդ պայմաններում։ Եթե 1917—1918 թթ. Անդրկովկասի սահմաններում կանգնած էին իմպերիալիստական երկրների՝ գերմանա-թուրքական, անգլո-ամերիկյան և այլ ագրեսորների-ինտերվենտների զինված բանակները, ապա բոլոր այդ սև ուժերն իրենց ակտիվ բարեկամները և օգնականները ունեին նաև Անդրկովկասում, Երկրամասի բոլոր խոշոր քաղաքներում և մարզերում բացահայտ գործող թշնամական կազմակերպություններից բացի, ընդհարումներ էին բորբոքում ռեակցիոն ուժերը։

Բուրժուա-նացիոնալիստական կազմակերպությունների և հոսանքների ներկայացուցիչները, ելույթ ունենալով կեղծ հայրենասիրական ֆրազաբանությամբ, ջանում էին օգտագործել նացիոնալիզմի, կլերիկալիզմի, սոցիալ-դավաճանության թույնով վարակված խավերի հետամնացությունը և ուշադրությունը ուղղել կեղծ հունով՝ ընդեմ ժողովրդական ռևոլյուցիոն ելույթների։ Այդ բոլորը գոյություն ունեին։ Գոյություն ունեին և հիրավի նշանակալի դեր էին խաղում։

Մենք, իհարկե, չենք կարող անտարբերությամբ անցնել վերոհիշյալ երևույթների կողքով։ Մենք նույնպես չենք կարող սահմանափակվել միայն մատնացույց անելով «դարավոր բարեկամությունը»։ Բոլոր ժողովուրդները միշտ ձգտել և ձգտում են բարության, բարեկամության և ազատության, լավ ու լուսավոր կյանքի։ Ժողովրդական ստեղծագործությունների հիանալի հուշարձաններում՝ հերոսական բալադներում ու դյուցազներգերում, ժողովրդական իմաստուն ասացվածքներում արտացոլված են նաև ասլագայի իղձերի անուրջները, շարագործությունը արմատախիլ անելու, շահագործողներին ու բռնակալներին կործանելու մասին ժողովրդի ձգտումները։ Այդ բոլորը ցայտուն կերպով ցույց են տալիս, որ մեր անցյալի մութ ու խավար հեռավոր տարիներին «բարեկամության» առումով ամեն ինչը չէր, որ գտնվում էր բարեհաջող վիճակում։ Եղբայրասպան կռիվները, ջարդերն այդ ահեղ օրերին սովորական երևույթ էին։ Հաճախ խաղաղ աշխատավորների խաբված շարքերը մասնակցում էին

ռազմական հարձակումներին, կողոպտում ու ոչնչացնում հարևան խաղաղ ժողովուրդներին, կապիտալիստների և կալվածատերերի ստոր ծառաների թելադրանքով կատարում բռնություններ։

Բավական է թեկուզ ամենարնդհանուր գծերով կանգ առնել 1907—1908 թթ. դեպքերի վրա, երբ իմպերիալիզմի վարձկանների, ծառաների և սպասավորների միջոցով տարվում էր ժողովրդական մասսաների մոլորեցման քաղաքականություն, ստեղծվում էր հակագիտական ուսմունք այս կամ այն ազգի, տոհմի, դավանանքի, սովորույթների գերադասության մասին։ 1905—1908—1914 թթ. աշխատավոր մասսաների հեղափոխական բռնկումների հետապնդման ու դադարեցման նպատակով կազմակերպվում էին նացիոնալիստական ընդհարումներ, կռիվներ, կոտորածներ։

Բարեխիղճ ընթերցողը գեղարվեստական գրականության առանձին գործերում, արյան և վրեժխնդրության մասին երգերում, թշնամական ցեղերի «ժառանգորդների» հետ «դատաստան» տեսնելու քարոզներում, կարող է հեշտությամբ նկատել, որ ինքնահատուկ և ոչ միշտ բարեհնչյուն մեղեդիներ պարունակող «արյան երգերը» ներծծված են նացիոնալիզմով։ Կուլտուրայի պատմաբանը, իհարկե, պարտավոր է նշել, «բարեկամության» բոլոր ուշագրավ և անվիճելի ցուցանիշները։ Սակայն դա չի կարող և չպետք է ստվերի տակ թողնի մամուլում հրապարակված, հաճախ ավելի ցայտուն, վկայությունները, ռեալ փաստաթղթերը և տեսությունները ավերածությունների, կոտորածների և առհասարակ սարսափելի երևույթների մասին։ 1918—1920 թթ. վեհապանծ էպոպեայի տարիներին, Վ. Ի. Լենինի դրոշի ներքո ռուսական պրոլետարիատի ելույթների շնորհիվ վերջ տրվեց այդ մութ անցյալին։ Ահա թե ինչու անհրաժեշտ է ավելի պարզ ընդգծել, որ ժողովուրդների իսկական բարեկամությունը և իսկական կուլտուրական համագործակցությունը մեզ մոտ ռեալ գործոններ դարձան սովետական իշխանության հաղթանակի շնորհիվ և Անդրկովկասում սովետական իշխանության հաստատումից հետո միայն։ Դրա համար էլ ամենաուշագրավ և նշանակալից երևույթն Անդրկովկասի ժողովուրդների պատմության մեջ եղել են և մնում են լենինյան պարտիական կազմակերպությունների առաջանալը և նրանց ելույթները Անդրկովկասում, բոլոր ժողովուրդների համագործակցության համար իրենց ինտերնացիոնալ պայքարով։

Անհրաժեշտ է այդ կարևորագույն պատմական փաստը ընդգծել որպես անհերքելի և ավելի ուշագրավ փաստ, նույնիսկ «դարավոր բարեկամությանը» նվիրված զեկուցումներում, որպեսզի «միամիտ» ընթերցողների համար պարզ լինի, թե «դարավոր բարեկամություն» վկայակոչելը, չի նսեմացնում ՍՄԿՊ-ի ղեկավարությամբ. սովետական եղբայրական ժողովուրդների ուժերով ստեղծված անհամեմատ ավելի հզոր նշանակություն ունեցող «բարեկամությունը» մեզ մոտ, Անդրկովկասում։

Դրան անհրաժեշտ է ավելացնել նաև այն, որ լենինյան լուսավոր պատգամները դրված են եղել սովետական Անդրկովկասի առաջին շինարարների եղբայրական համագործակցության հիմքում։ Այսօր հայտնաբերելով և նշելով Ստալինի անձի պաշտամունքի տիրապետության տարիներին կատարված խայտառակությունները, սխալները, հանցագործությունները, շատ հաճախ հիշում ենք 1920—1922 թթ. հերոսական տարիներին Անդրկովկասի խորհրդային ներկայացուցիչներին, Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտներին

և զինակիցներին, որոնք Անդրկովկասում դրեցին երիտասարդ սովետական իշխանության առաջին հիմքերը։ Այդ բացատրվում է նրանով, որ նրանց աշխատանքով, դժվարին տարիներին կազմակերպված ժողովուրդների «կուլտուրական համագործակցությունը» հանդիսանում էր բոլշևիկյան-լենինյան ավանգարդի՝ պարտիայի շուրջը լայն մասսաների համախմբման ուժն ու ամրոցը։ Այդ փաստը պարզ և հաստատուն կերպով նշել է ՍՄԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար, ՍՍՌՄ Մինիստրների սովետի նախագահ ընկ. Ն. Ս. Խրուշչովը։

Սոցիալիստական շինարարության բուռն ընթացքը, հաղթական արշավը դեպի առաջ, դժվարին ճակատներում ձեռք բերված հաջողությունները պայմանավորված են լենինյանների անսասան շարքերի անսահման նվիրվածությամբ, եռանդով և աշխատանքով։

Այսօր մենք կարող ենք ասել, որ այդ դժվարին տարիներին պարտիայի նշանակալի օգնությունը, մեր կարծիքով հանդիսացավ լենինյան ղեկավարությամբ կուլտուր-լուսավորական հիմնարկների ստեղծումը։ Աշխատավորների ռևոլյուցիոն դաստիարակության և պարտիայի շուրջը սովետական ժողովրդի լավագույն շարքերի համախմբման, կուլտուրական համագործակցության կազմակերպման գործում մեծ օգնություն են ցույց տվել գրքի, դրշի, լուսավորության անձնվեր աշխատողները, սովետական ուսուցիչների, գրողների, գիտնականների մեծ բանակը։

Այդ տարիներին, ինչպես նաև հետագայում կուլտուրական շինարարության բոլոր աշխատողների համար, որպես ղեկավար պատգամներ եղել են Վ. Ի. Լենինի իմաստուն ցուցումները և լուսավորության ու կուլտուրայի համար մեծ նշանակություն ունեցող Ն. Կրուպսկայայի բովանդակալից ստեղծագործությունները։ Լենինյան գաղափարները մասսայականացնողների և պրոպագանդիստների արտակարգ ուշադրությունը և ուսուցիչների ու գիտնականների բանակի անխոնջ և առաջավոր շարքերի ցուցումները է՛լ ավելի են ուժեղացել նրանով, որ դրանք տարվել են ժողովրդի համար մատչելի, մայրենի լեզվով, ընդգրկելով դգայուն ունկնդիրների և սովորողների աշխատավորական լսարանի, բարեկամության, խաղաղության, կոմունիզմի մասին լուսավոր պատգամներին ակտիվ կերպով արձագանքողների ամենալայն շրջաններին։

Այսօր մենք պարտավոր ենք ընդգծել, որ այդ անձնվեր աշխատողների բանակում նշանավոր դեր են խաղացել ուսուցիչները, պիոներական շարժման և մանկապարտեզների կազմակերպիչները, սովետական գրքի պրոպագանդիստները, Հայդարի, Օստրովսկու, Ֆուրմանովի աշխատությունների տարածողները։ Այդ մեծ բանակի աշխատողները ադրբեջաներեն, հայերեն, վրացերեն կոչ են արել կարդալ Պուշկինին ու Գոգոլին, Տոլստոյին ու Տուրգենևին, Չեխովին ու Գորկուն, ռուս մեծ ժողովրդի լավագույն և իմաստուն զավակներին։ Հենց նրանք էլ ազգային դպրոցներում փառաբանել են ռուսական հումանիստական կուլտուրան և միշտ աշխատավոր դգայուն ունկնդիրներին հիշեցրել, որ ռուսական առաջավոր գրողները և գիտնականները եղել են բոլոր ազատագրված ժողովուրդների, կուլտուրայի ներկայացուցիչների նվիրական ուսուցիչները։ Մայրենի լեզվով տպագրված գրքերում և դասագրքերում նոր ընթերցողների լայն շրջանները իմաստուն և բարի խոսքերն ընկալել են իբրև հզորագույն զենք, կուլտուրական համագործակցության ուժգին ազդակ։ Այդ

շարժման կազմակերպման և զարգացման իսկական պրոցեսն ընթացել է առանց ադմինիստրատիվ ճնշումների, այն ակտիվ հետաքրքրության պայմաններում, որ գոյություն ուներ ոչ միայն ռուսական գրականության նկատմամբ, այլ նաև ռուսաց լեզվի՝ մեծ Լենինի, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության լեզվի նկատմամբ և որն օգնել է բոլոր ազատասեր ժողովուրդներին՝ եղբայրական համագործակցության շուրջը համախմբվելու համար։

Կարելի է նշել նաև այն, որ սովետական իշխանության առաջին տարիներին կազմակերպված հոբելյանական տոները նվիրված Պուշկինին, Գյոթեին, Շեքսպիրին, Գոգոլին, Նեկրասովին, Բելինսկուն և Արևելքի հումանիստ մտածողներ Բիրունիին, Նավոիին, Նիզամիին, Ախունդովին, Սաադուն, Ռուսթավելուն, Ծերեթելուն, Աբովյանին, Նաբանդյանին, Սայաթ-Նովային և շատ ուրիշ գրողների ունեցել են կարևորագույն նշանակություն, արթնացրել և ուժեղացրել են հետաքրքրությունը հումանիստական կուլտուրայի հուշարձանների նկատմամբ, միաժամանակ նպաստել են մեր սոցիալիստական հայրենիքի՝ Սովետական Միության բոլոր ժողովուրդների կուլտուրական համագործակցությանը։ Դրա հետ միաժամանակ նորից ընթերցող լայն շարքերը տեսել են, որ ռուսաց լեզուն հանդիսանում է ոչ միայն լենինյան խոսքի յուրացմանը նպաստող ազդակ, այլ նաև միջազգային կուլտուրայի յուրացմանը նպաստող գործոն։ Դրա համար էլ համաշխարհային գրականության ներկայացուցիչների, Արևմուտքի և Արևելքի կլասիկների աշխատությունների թարգմանության նախագծերը գրվել են հրատարակությունների և կուլտուրլուսավորական կազմակերպությունների աշխատանքի հիմքում։ Ռուս գրողների և գիտնականների, հետազոտողների, պատմաբանների և գրականագետների, տաղանդավոր թարգմանիչների հավաքագրման և կազմակերպման գործում Մ. Գորկու աշխատանքի մասին Կ. Ի. Չուկովսկու հուշերը ցույց են տալիս, որ Մ. Գորկու նախաձեռնությամբ սկսված և Վ. Ի. Լենինի կողմից հավանության արժանացած այդ աշխատանքը ժողովուրդների կուլտուրական համագործակցության զարգացման ուժեղագույն միջոցն է դարձել։

Այստեղ ես կանգ չեմ առնում ընթերցարանների, դպրոցների, կուլտուրլուսավորական հիմնարկների, ընթերցողների համաժողովրդական լսարանի անընդհատ աճի մասին հրապարակված թվերի ու ցուցանիշների վրա։

Ամենադժվարին տարիներին կուլտուրայի կառուցողները միշտ առաջնորդվել են ռուսական գրականության և գիտական հասարակայնության լավագույն ներկայացուցիչների փորձով ու խորհուրդներով։ Կուլտուրական համագործակցությունն ավելի ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է ճշտել, թե Անդրկովկասում սովետական իշխանություն հաստատվելուց հետո ինչպիսի կուլտուր-լուսավորական հիմնարկներ են եղել։ Կուլտուրական համագործակցությունը, իհարկե, չէր կարելի կազմակերպել բավարար չափով ամուր հիմքերի վրա առանց նախադպրոցական և հատկապես արտադպրոցական կրթության, առանց ակումբների ու գրադարանների, ռադիոյի, կինոյի, պարբերական մամուլի օրգանների ակտիվ օգնության։ Հայտնի է, որ հակառևոլյուցիոն ուժերի կողմից օկուպացված մարզերի և շրջանների ազատագրումից հետո առաջին հերթին ստեղծվեցին ոչ միայն սովետական իշխանության օրգաններ, այլ նաև գրադարաններ, ընթերցարաններ, ակումբներ, նոր դպրոցներ։ Անվերապահորեն կարելի է ընդգծել, որ սովետական իշխանությունը առա-

չինն էր աշխարհում, որ ադմինիստրատիվ օրգաններ կազմակերպելուց բացի ազատագրված աշխատավորներին կոչ էր անում կառուցել ակումբներ և դպրոցներ, միշտ մեծ ուշադրություն դարձնել երիխաների և երիտասարդների, աշխատավոր ժողովրդի լայն մասսաների դաստիարակության վրա։

Կարելի է նշել պարտիայի և կառավարության օրգանների դիրեկտիվների համաձայն կատարած մեծ աշխատանքն ագիտացիոն-հրահանգչական գնացքների և ՀամԿՐ. Կ-ի նավերի ստեղծման գործում։ Հայտնի է, օրինակ, որ հակառևոլյուցիոն սև բանդաների ջախջախումից հետո, Մ. Կալինինի անվան «Սովետական Կովկաս» գնացքի աշխատողները Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում ագիտացիոն ակտիվ աշխատանքի հետ միասին մեծ գործ կատարեցին կուլտուր-լուսավորական հիմնարկների ուսումնասիրման բնագավառում, հրատարակեցին գնացքային թերթեր, օգտագործեցին կինոն և ռադիոն, ամրապնդեցին կապը տեղական ինտելիգենցիայի հետ։ Այդ հրաշունչ օրերին Անդրկովկասի երիտասարդության ակտիվ շարքերը որոշակի դեր են խաղացել Դաղստանում, Ադրբեջանում, Անդրկովկասում։ Երիտասարդության ձգտումը և առաջավոր շարքերի ակտիվացումն ամենից առաջ պայմանավորված էր սովետական իշխանության հաղթանակով, բուրժուա-կալվածատիրական հակահեղափոխական սև ուժերի ջախջախումով։ Այդ փաստը նշվել է Մ. Գորկու և մյուս գրողների ասույթներում՝ համակրթական լուսավորական հիմնարկների, մասսայական պարբերական մամուլի, բանվորա-գյուղացիական երիտասարդական դպրոցների կազմակերպման տարիներին։ Մ. Գորկին հիշտ է նկատել, որ «բանականության զարգացման մեջ ամբողջ երիտասարդության իրավունքների հավասարեցումը» կարող է և պետք է ստեղծի սովետական երիտասարդների շատ նոր կադրեր։ Այդ պատմական ժամանակաշրջանում ավելի բարձրացավ ուսուցիչների, պրոպագանդիստների, դասախոսների դերն առանձին և հետամնաց շրջաններում։

Դրա համար էլ բոլորովին զարմանալի չէ, որ 1937 թ. հրապարակված տվյալների համաձայն ավելի քան 122 հազար ուսուցիչներ ընդգրկված էին ՍՍՌՄ Գերագույն և ռեսպուբլիկաների տեղական սովետների դեպուտատների կազմում, իսկ 29,327 ուսուցիչներ ստացել են Լենինի շքանշան 30 տարի կուլտուրական շինարարության բնագավառում աշխատելու համար։

Սովետական ժողովրդի հետ սերտորեն կապված մանկավարժ-ուսուցիչների լուսավոր պլեադայի թանկարժեք ներդրումը, իհարկե, խաղացել է շատ կարևոր դեր։ Հարկավոր է նույնպես նկատի ունենալ և ոչ քիչ նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ կազմակերպական-դաստիարակչական աշխատանքի կոնկրետ բովանդակությունը սովետական դպրոցում, ինչպես հայտնի է, ներծծված է ժողովուրդների հումանիստական և բարեկամության բարձր գաղափարներով։ Քաղաքներում և ամենահեռավոր շրջաններում ստեղծված բոլոր դպրոցներում սովետական ուսուցիչները ձգտել են լուծելու մեր պարտիայի և կառավարության մատնանշած խնդիրները։ «Լենինյան ժողովածուների» առանձին հատորներում զետեղված փաստաթղթերից և նյութերից երևում է, որ Վ. Ի. Լենինը ուշադրությամբ էր հետևում լուսավորության ժողովրդական կոմիսարիատի օրգանների գործունեությանը։ Սովետական դպրոցի աշխատողները ձգտում էին դաստիարակել հասարակական-հանրօգուտ ունակություններ, սովորողներին ընդգրկել հասարակական աշխատանքներում,

նրանց դաստիարակել սովետական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով, ժողովուրդների եղբայրության կուռ սկզբունքներով, ամրապնդել սեր դեպի փոքր և մեծ ժողովուրդները, լուսավորություն ունենալ գիտությունը։ Ուշադրությամբ ուսումնասիրելով սոցիալիստական մեծ հայրենիքի՝ Սովետական Միության կուլտուր-լուսավորական հիմնարկների նվաճումները և հաջողությունները, Անդրկովկասի ռեսպուբլիկաների բոլոր աշխատողները ամենուրեք նկատի են ունենում, ինչպես Հյուսիսում հրատարակված տեսությունների, այնպես էլ սովետական գրողների առանձին, ավելի ուշագրավ աշխատություններում նշված ցայտուն օրինակների ղեկավար նշանակությունը։

Պատմության դասատուները, օրինակ, դասերի ժամանակ լուսաբանել են Գարիբալդու, Ժելյաբովի, Պեստելի, Ալեքսանդր Ուլյանովի հերոսական կերպարները։ Գրականության դասատուները կանգ են առել համաշխարհային գրականության կոթողների բնութագրման վրա, սովորողներին և ունկնդիրներին կոչ արել ուսումնասիրել մեծ հումանիստ ազատամիտներ Դալիլեյի և Կոպերնիկոսի, Բայրոնի, Շիլլերի, Մարկ Տվենի և այլ հայտնի գրողների, նկարիչների կյանքն ու գործունեությունը։ Պուշկինի և Բելինսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի և Տարաս Շևչենկոյի կյանքի ու գրական գործունեության էջերը գրականության դասերի ժամանակ ստացել են ուսանելի վավերագրերի նշանակություն՝ բոլոր ունկնդիրների գիտակցության բարձրացման համար։

Դասատուների և ուսանող ունկնդիրների համար հրատարակված դասագրքերը, բիբլիոգրաֆիական և տեղեկատու նյութերը հետաքրքրություն են առաջացրել կուլտուրական շինարարության պրոբլեմների նկատմամբ, սեր ժողովրդի, աշխատանքի և աշխատավորների նկատմամբ, հումանիզմ և արիություն են ներշնչել առաջավոր գրողների աշխատություններում ուրվագծված կերպարների բնութագրմանը նվիրված դասերին։ Մ. Գորկու նախաձեռնությամբ ստեղծված ականավոր գրողների, նկարիչների, գիտնականների կենսագրական սերիաները, կամ գործարանների, ֆաբրիկաների պատմության մասին գրքերը, սովետական կուլտուրայի նվաճումների մասին հավաքածուները, մեծապես նպաստել են սոցիալիզմի բոլոր բնագավառներում սովետական և ռևոլյուցիոն նոր երիտասարդական կադրերի պատրաստման ու դաստիարակման գործին։

ՍՄԿՊ որոշումներով իրագործված միջոցառումները կադրեր են պատրաստել, ինչպես կուլտուրական շինարարության կազմակերպման և նոր կոմունիստական կուլտուրայի կառուցման, այնպես էլ Անդրկովկասի կուլտուրական համագործակցության համար։

Չի կարելի պատահականություն համարել, որ արտասահման ան մեր հյուրերը, բարեկամները շատ հաճախ ուսումնասիրում են սովետական երիտասարդ սերնդի աճման ու զարգացման մասին փաստերը և տեղեկությունները։ Այդպիսի մոտեցումը բացատրվում է ոչ միայն Հայդարի, Օստրովսկու, Ֆադեևի և մեր ուրիշ գրողների հիանալի ստեղծագործություններում ուրվագծված կերպարներից ստացված տպավորություններով։ Սովետական Միության բոլոր կառույցներում դրսևորվող նոր երևույթները և փաստերը, իսկապես, տակավին 30-ական թվականներին աչքի են զարնվել այնպիսի ուժգնությամբ, որ պետք է գրավեին արտասահմանյան ավելի խոհուն գրողների և գիտնականների ուշադրությունը։ Այդ մասին, Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Երևանում եղած ժամանակ պատմեց ֆրանսիական նոր գրակա-

նության ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ժան Ռիշար Բլոկը։ Երևանի արվեստի թանգարանում նրա ուշադրությունն ամենից շատ գրավել են երիտասարդ շինարարների պատկերները։ Հետագայում, Հայրենական մեծ պատերազմից հետո, նոր երիտասարդության դերը նշել են Զանդրա Կրիշնան, Ալբերտո Մորավյան և արտասահմանյան ուրիշ գրողներ։

Թերևս ավելորդ չէ նույնպես հիշեցնելու դպրոցների և երիտասարդ սովորողների արտադրության հետ մոտեցման վերաբերյալ պարտիայի որոշումների արձագանքների մասին։ Օրինակ, 1958 թ. «Պրավդայում» տպագրված էր միջնակարգ դպրոցի շրջանավարտ Տ. Տիմոշինայի նամակը, որը Նովոկրամատորսկի գործարանում աշխատանքի էր ընդունվել որպես հղկող բանվորուհի։ «...Ես,—հայտնում է Տ. Տիմոշինան,—դրանից հետո Սովետական Միության բոլոր ծայրամասերից ստացել եմ 500-ից ավելի նամակներ։ Գրել են անծանոթ մարդիկ... շնորհավորել են նրա համար, որ մենք գնացինք... կանգնելու հաստոցների առաջ...»։

Անդրկովկասի բոլոր ռեսպուբլիկաներում շատ շրջանավարտներ նույնպես խոշոր ձեռնարկություններ գնացին։ Սովետական Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի Կիրովի անվան խոշոր հաստոցաշինական գործարանում կազմակերպվել է «դպրոցականներին սովորեցնելու արտադրական հատուկ ցեխ»։ Այստեղ տեղադրվել են գործարանում եղած բոլոր տեսակի հաստոցներ։ «...Այս ցեխում պատրաստված բոլոր մասերը ամենևին էլ ուսումնական չեն...»։ «Բոլոր երեխաները կարող են տեսնել իրենց աշխատանքի պտուղները, որ իրենց բանվորական ձեռքերը մասնակցում են ամբողջ երկրով մեկ տարածված, նրա սահմաններից դուրս ուղարկված հաստոցների արտադրմանը...»։

Այդպիսի փաստեր են աչքի ընկնվում նաև Ադրբեջանի ու Հայաստանի գործարաններում... Դպրոցները արդեն կապվում են արտադրության հետ։ Աշխատանքի ու աշխատավորների և դպրոցների միջև անցած տարիներին եղած պատնեշը անհետանում է։ Դպրոցի հետ միասին գործարանը վերածվում է ժողովրդական կուլտուրական համագործակցությանն օգնող հզոր գործոնի։ Մեր առաջավոր երիտասարդության լավագույն շարքերը կանգնած են կոմունիզմի համաժողովրդական շարժման առաջին դիրքերում։ Նոր, պայծառ երիտասարդության շարքերում մենք տեսնում ենք ուսուցիչների, գրողների, գիտնականների, նոր կյանք կառուցող երիտասարդ բանակին։

Անկասկած, անցյալում եղել են և առանձին վրիպումներ, որոնք այսօր էլ գոյություն ունեն սոցիալիստական շինարարության այս կամ այն բնագավառում։ Սակայն նվաճումներն այնքան վիթխարի են, իսկ երիտասարդության վերելքն այնքան նկատելի, որ չի կարող լինել ոչ մի թերագնահատում։

Մենք ամենաընդհանուր գծերով նշեցինք ուշագրավ տեղեկությունները։ Պարելի էր ավելի մանրամասը տվյալներ, փաստեր և թվեր բերել, դպրոցական և առհասարակ կուլտուրական շինարարության, մեր գիտնականների, գրողների, նկարիչների գործունեության, վերջապես սովետական երիտասարդության կուռ շարքերի մասին, երիտասարդություն, որ անցել է մեծ և նշանակալի ուղի։

Դժվարությունների և խոչընդոտների հաղթահարումը կոմունիզմ կառուցողների կողմից հաստատ համոզմունք է առաջացնում, որ «Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրական համագործակցության» աշխատանքը պետք է էլ ավելի բարձր աստիճանի վրա դրվի։